ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գործուղված անձ՝ Արա Ֆիդանյան

Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

Գործուղման վայրը եւ ժամկետները՝

Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաք, 2022թ. փետրվարի 9-ից 11-ը

Հրավիրող կողմ՝ Եվրոպոլ

Գործուղման նպատակը՝ Այց Եվրոպոլի գրասենյակ

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ս.թ. փետրվարի 10-ին Եվրոպոլի գրասենյակ էր այցելել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակությանը ուղեկցում էին Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ դեսպան Տիգրան Բալայանը և դեսպանության կցորդ Վիվիանա Քալաեջյանը:

Այցի նպատակն էր քննարկել 2021թ. սեպտեմբերի 28-ին Եվրոպոլի գործադիր տնօրեն տիկին Քեթրին դը Բոլի և ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-մայոր Վահե Ղազարյանի կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև համագործակցության հաստատման վերաբերյալ» աշխատանքային համաձայնագրի շրջանակներում համագործակցության հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես՝ տեղեկատվության փոխանակման և պահպանման, ազգային կոնտակտային կետի և կապի սպայի նշանակման, համաձայնագրից բխող հետագա անհրաժեշտ քայլերը, տեխնիկական և իրավական գործիքները և այլն:

Այցի շրջանակներում պատվիրակությանը ընդունեց Եվրոպոլի գործադիր տնօրեն Քեթրին դը Բոլը: Արա Ֆիդանյանը կարևորել է ՀՀ ոստիկանության և Եվրոպոլի միջև կնքված համագործակցության համաձայնագիրը՝ նշելով որ այն լայն հնարավորություններ է

ընձեռում կազմակերպված հանցավորության դեմ համատեղ պայքարի ոլորտում, մասնավորապես՝ մարդկանց թրաֆիքինգի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի, անօրինական միգրացիայի և այլ ոլորտներում տեղեկատվության փոխանակման գործում:

Այնուհետև Ա. Ֆիդանյանը ներկայացրել է նաև ՀՀ ոստիկանությունում ընթացող բարեփոխումները:

Տիկին դը Բոլը իր հերթին ևս պատրաստակամություն հայտնեց զարգացնել համագործակցությունը ՀՀ և Եվրոպոլի միջև:

Այցի ընթացքում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ ևս Եվրոպոլի ղեկավար կազմի հետ, որոնց ընթացքում ներկայացվեցին Եվրոպոլի օպերատիվ կարողությունները, վիճակագրությունը, իրավական կարգավորումները և այլն:

Հանդիպումներ տեղի ունեցան Վրաստանի, Ուկրաինայի և Գերմանիայի կապի սպաների հետ, ովքեր ներկայացրեցին իրենց գործառույթները:

Այցի ողջ ընթացքում պատվիրակությանը բազմակողմանի աջակցություն է ցուցաբերել Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ դեսպանությունը, ի դեմս դեսպան պարոն Տիգրան Բալայանի:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համագործակցությունը ամրապնդելու նպատակով ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես 2022թ. երկրորդ կիսամյակում Քեթրին դը Բոլի ՀՀ այց կազմակերպելու վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ **Ա. Ֆիդանյան**

« 14 » 02 2022թ.